ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2020թ. թիվ 531-Ա

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԱՐՏԱԸՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ 150-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1913-Ն որոշման 2-րդ հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետը և ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի մայիսի 27-ի «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1387-Լ հրամանը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողով՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողովի գործունեության աշխատակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2015թ. մայիսի 20-ի «Վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողով ձևավորելու, հանձնաժողովի գործունեության աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 150-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հուլիսի 16-ի
թիվ 531-Ա որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԱՐՏԱԲՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա.Մխիթարյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար

Ա.Գուլանյան - հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Հանձնաժողովի անդամներ.

Լ.Վարդանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող

Ա.Հովհաննիսյան - ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/

Ս.Լամբարյան - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի պետի պաշտոնակատար /համաձայնությամբ/

Ն.Էվինյան - «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տնօրեն

Վ.Մկրտչյան - «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Վ.Սիսակյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Մ.Հազրոյան - «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ս.Մոսինյան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Գ.Իլոյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Լ.Հակոբյան - «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համաճարակաբան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

07/16/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հուլիսի 16-ի
թիվ 531-Ա որոշման

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԱՐՏԱԸՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Հանձնաժողովի նպատակը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների (այսուհետև՝ վիրուսային հեպատիտների) կանխարգելման գործընթացի ապահովմանն ուղղված հարցերի քննարկումն է, ինչպես նաև վիրուսային հեպատիտների կանխարգելման գործընթացում բոլոր շահագրգիռ մարմինների համագործակցության, ներգրավվածության և արձագանքման գործընթացի համակարգումը, գերակա խնդիրների վերհանումը, գործընթացի հսկողությունը և համակարգումը:

3. Հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) վիրուսային հեպատիտների համաճարակային իրավիճակի լարվածության, բռնկումների ժամանակ համակարգում է արձագանքման միջոցառումները՝ շահագրգիռ մարմինների գործողությունների իրականացման միջոցով:

2) օժանդակում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում գործող պետական կառավարման և այլ մարմինների կողմից վիրուսային հեպատիտների կանխարգելման աշխատանքներին,

3) կազմակերպում է վիրուսային հեպատիտների կանխարգելման գերակա հարցերին վերաբերող խորհրդաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ,

4) կազմակերպում է վիրուսային հեպատիտների վերաբերյալ կանխարգելման միջոցառումների վերանայման և լրամշակման աշխատանքները,

5) քննարկում է վիրուսային հեպատիտների կանխարգելման ոլորտին առնչվող կառույցների կողմից ներկայացվող խնդիրները՝ ՀՀ առողջապահության նախարարության քննարկմանը համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են կիսամյակը առնվազն մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը կարող է լինել 5, առավելագույնը՝ 15:

6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն

արձանագրվում է: Հանձնաժողովի նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

7. Հանձնաժողովի նիստերում, բացի հանձնաժողովի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների կեսից ավելի ձայներով:

10. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

11. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը:

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

13. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

14. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և, անհրաժեշտության դեպքում, կատարելու դիտողություններ և առաջարկություններ:

2) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին.

3) իրենց իրավասության շրջանակներում կատարում են հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները:

4) Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում վերջինս ծանոթանում է նիստի արձանագրությանը 5-օրյա ժամկետում:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է հանձնաժողովի նիստերը,

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը

3) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

4) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը, շրջանառում է այն և համակարգում է հանձնաժողովի անդամների դիտողությունների և առաջարկությունների քննարկման և արձանագրությունների լրամշակման գործընթացը.

5) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը:

15. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

16. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի որոշմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

07/16/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ